ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի աճուրդի կազմակերպիչը հայտարարում է Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի բաց դասական աճուրդ:

Լոտ 1 - «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ, գյուղ Մեծ Պարնի 11-րդ փողոց 6/1 հողամաս» հասցեում գտնվող, 06-075-0253-0038 կադաստրային ծածկագրով 1,4 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը՝ սառնարանային տնտեսություն կառուցելու նպատակով:

Հողամասը գտնվում է Մեծ Պարնի բնակավայրում, հարևանությամբ առկա են գազատար, էլեկտրահաղորդման գծեր: Հողամասի նկատմամբ սահմանափակումներ (ներառյալ՝ սերվիտուտներ) առկա չեն:

Հողամասի աճուրդով օտարման մեկնարկային գինը 9 424 800 ՀՀ դրամ: Աճուրդին մասնակցել ցանկացողները աճուրդի անցկացման օրը վճարում են նախավճար՝ 4 712 400 ՀՀ դրամ (հողամասի մեկնարկային գնի 50%-ի չափով): Քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով՝ 471 240 ՀՀ դրամ:

Լոտ 2 - «Մարզ Լոռի, համայնք Մեծ Պարնի 26-րդ փողոց 6 հողամաս» հասցեում գտնվող, 06-075-0240-0010 կադաստրային ծածկագրով 0,7108 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը՝ չորանոց կառուցելու նպատակով:

Հողամասը գտնվում է Մեծ Պարնի բնակավայրում, հարևանությամբ առկա են գազատար, էլեկտրահաղորդման գծեր: Հողամասի նկատմամբ սահմանափակումներ (ներառյալ՝ սերվիտուտներ) առկա չեն:

Հողամասի աճուրդով օտարման մեկնարկային գինը 7 186 188 ՀՀ դրամ: Աճուրդին մասնակցել ցանկացողները աճուրդի անցկացման օրը վճարում են նախավճար՝ 3 593 094 ՀՀ դրամ (հողամասի մեկնարկային գնի 50%-ի չափով): Քայլի չափը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով՝ 359 309,4 ՀՀ դրամ:

Աճուրդի կազմակերպման և անցկացման ընթացակարգին, պայմաններին, հողամասի հատակագծին, ճարտարապետահատակագծային առաջադրանքի պահանջներին, պայմանագրի տիպային օրինակին ծանոթանալու և հայտ ներկայացնելու համար դիմել Սպիտակի համայնքապետարան (Շահումյան 7, 2-րդ հարկ, 207 սենյակ):

Հայտերի ընդունումը և մասնակիցների գրանցումը դադարեցվում է աճուրդի անցկացման օրվանից երեք աշխատանքային օր առաջ՝ 2025 թ. փետրվարի 12-ին:

Աճուրդին մասնակցելու իրավունք ունեն ՀՀ քաղաքացիներն ու իրավաբանական անձինք և ՀՀ օրենսդրությամբ սահմանված հողի սեփականության իրավունքի այլ սուբյեկտներ և հողօգտագործողներ:

Աճուրդին մասնակցել ցանկացողները հայտին կից ներկայացնում են անձնագիր և աճուրդի մասնակցության վճարի անդորրագիր 10 000 ՀՀ դրամի չափով՝ վճարված Սպիտակի համայնքապետարանի 900245161410 հաշվեհամարին:

Հայտերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-18.00 մինչև 2025թ. փետրվարի 12-ը:

Աճուրդը կայանալու է 2025թ. փետրվարի 17-ին ժամը 11.00-ին, Սպիտակի համայնքապետարանում (Շահումյան 7, 3-րդ հարկ, 310 սենյակ):

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ: